Ներել ինչպես Նեփին

Այզեան չէր ուզում մշտապես զայրացած լինել Ջոշի վրա:

Նոել Լամբերթ Բարուս
(Հիմնված է իրական պատմության վրա)

Այս պատմությունը տեղի է ունեցել ԱՄՆ-ում:

Այզեան վազեց և գնդակը փոխանցեց իր թիմակից՝ Թիմոթիին: Նա տեսավ, թե ինչպես է Թիմոթին ոտքը հետ տանում և գնդակը խփում դարպասի ուղղությամբ:

«Գոլ»,- Բղավեց Թիմոթին, երբ գնդակը դիպավ ցանցին:

Այզեան ուրախացավ: Նրանք հաղթել էին խաղը:

Երբ նա դուրս էր գալիս խաղադաշտից, իրեն հիանալի էր զգում: Բայց հետո մյուս թիմի երեխաներից մեկը՝ Ջոշը, նրան վիրավորական խոսք ասաց:

Այզեան զարմացավ և վիրավորվեց: Նա չգիտեր, թե ինչ ասեր: Նա ներքև նայեց և դանդաղ քայլեց իր թիմակիցների մոտ:

«Մենք դա արեցինք»,- ասաց Թիմոթին: «Հրաշալի փոխանցում էր, Այզեա»:

Բայց Այզեան ուրախ չէր: Ոչ թե այդ խոսքի պատճառով, որ Ջոշն ասաց: Նա տխուր էր և զայրացած:

Այդ օրվա երկրորդ կեսի ողջ ընթացքում Այզեան այնպես էր զգում, կարծես մի ծանր բեռ իրեն ներքև էր քաշում: Նա Ջոշին այլևս *չէր* սիրում:

Երեկոյան՝ սուրբ գրությունների ժամին, Այզեան միացավ իր ընտանիքին: Նա փորձում էր լսել, երբ քույրը կարդում էր: Սակայն նա չէր դադարում մտածել այն մասին, թե ինչ ասաց Ջոշը:

Այզեան թերթեց իր Մորմոնի Գրքի էջերը: Նա կանգ առավ 1

Նեփի գրքից մի հատվածի վրա: Դա այն ժամանակի մասին էր, երբ Նեփիի եղբայրները չարությամբ էին վերաբերվում նրան:

«Եվ եղավ այնպես, որ ես անկեղծորեն ներեցի նրանց», - ասվում է սուրբ գրությունում:*

Արդյոք Նեփին ներե՞ց իր եղբայրներին: Մտածեց Այզեան: *Նույնիսկ այն բանից հետո, երբ նրանք այդքան չա՞ր էին իր հանդեպ:*

Այզեան մտածեց Ջոշի մասին: Նա չէր ցանկանում հավերժ պահել Ջոշի հանդեպ ունեցած իր վատ զգացմունքները: Նա ընդամենը 10 տարեկան էր:

Այզեան ցանկանում էր Նեփիի նման լինել: Նա կարող էր ներել Ջոշին, ինչպես Նեփին ներեց իր եղբայրներին: Եվ եթե Ջոշը նորից ինչ-որ ստոր բան ասեր, նա պարզապես կխնդրեր նրան չասել:

Նա ջերմ ու խաղաղ զգացում ունեցավ ներքուստ: Կարծես Սուրբ Հոգին ասեր. «Դու ճիշտ ես վարվում»:

«Այզեա, դու ի՞նչ սովորեցիր այս սուրբ գրություններից», - հարցրեց մայրիկը:

Այզեան բարձրացրեց աչքերը: «Կներեք, ես այլ սուրբ գրություն էի կարդում», - ասաց նա: Նա պատմեց իր ընտանիքին, թե ինչ էր տեղի ունեցել ֆուտբոլի խաղի ժամանակ:

Մայրիկն ու հայրիկը գրկեցին Այզեային: «Լավ չէ, որ Ջոշը չար է եղել քո հանդեպ»,- ասաց հայրիկը: «Այն, ինչ նա ասել է, ճիշտ չէ: Սակայն բնական է, որ դու դրանից վիրավորվել ես:

Այզեան ժպտաց: «Շնորհակալություն: Երկար ժամանակ ես շատ զայրացած էի: Բայց հիմա, երբ կարդացի սուրբ գրությունները, չեմ ուզում զայրացած լինել նրա վրա: Ես ցանկանում եմ ներել նրան: Եվ արդեն ինձ լավ եմ զգում»:

«Հրաշալի է», - մայրիկը նույնպես ժպտաց: «Ներելը միշտ չէ, որ հեշտ է: Բայց դու ճիշտ ես: Արժե ներել»:

Այզեան նայեց իր սուրբ գրություններին: Դրանք օգնեցին իրեն: Ծանր բեռի զգացումն անցել էր: Փոխարենը՝ նրա սիրտը ջերմացել էր և խաղաղվել: ●

*1 Նեփի 7.21

Դարձը՝ ԱԼԻՍՈՆ ԹԱՔԵՐԻ